

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

28.08.2014թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 58 (հիսունութ) անդամից ներկա էին 50-ը (հիսուն):

ՕՐԱԿԱՐԳ՝

1.ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի 2014-2015 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում:

Զեկ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

2.Հնգամյա զարգացման ռազմավարական ծրագրի՝ 2015թ.-ի աշխատանքային պլանի /խնդիրներ, պատասխանատուներ և ժամկետներ/ ներկայացում:

Զեկ.՝ Գիտության և արտաքին կապերի
գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

3.Ընթացիկ հարցեր:

3.1 «Ներառական կրթություն» առարկայի ընդգրկմամբ հատուկ մանկավարժի որակավորում շնորհող մագիստրոսական կրթական ծրագրերի ուսումնական պլաններում մասնակի փոփոխություն կատարելու մասին:

3.2 Տեղեկատվություն դասախոսի տարեկան անհատական աշխատանքային պլանի մասին:

3.3 Տեղեկատվություն ԳՊՄԻ-ի հիմնադրման 80-երորդ հոբելյանի շրջանակներում կազմակերպվող միջոցառումների մասին:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

3.4 ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 10-րդ դասարանի հոսքերի ձևավորման և առկա ժամաքանակի մասին:

Զեկ.՝ ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի տնօրեն Մ. Կարապետյան

3.5 ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 2013-2014 ուստարվա հաշվետվություն և 2013-2014 ուստարվա ներքին գնահատման հաշվետվություն:

Զեկ.՝ ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի տնօրեն Մ. Կարապետյան

Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 50 անդամ. կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի 2014-2015 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանի հաստատման մասին (**Ձեկ.**՝ ռեկտոր Վ. Գրիգորյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ս. Սարգսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի 2014-2015 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 50 անդամ. կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ.- Հնգամյա զարգացման ռազմավարական ծրագրի՝ 2015թ.-ի աշխատանքային պլանի /խնդիրներ, պատասխանատուներ և ժամկետներ/ ներկայացում (**Ձեկ.**՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

Ա. Ֆարմանյանը բուհի զարգացման 5-ամյա ռազմավարական ծրագրի առկայությունը /հաստատված՝ ԳՊՄԻ-ի խորհրդի կողմից 2014թ. փետրվարի 08-ին/ դիտեց առաջադեմ քայլ, քանի որ մինչ այդ բուհն առաջնորդվել է կարճաժամկետ /մեկամյա/ աշխատանքային պլանով: Իհարկե, նախքան ռազմավարական ծրագրի ստեղծումը, իրականացվել է կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների՝ վերջին 5 տարիների ընթացքում ծավալած գործունեության հետազոտություն՝ ուղղված ներքին թույլ և ուժեղ կողմերի, ինչպես նաև արտաքին հնարավորությունների ու սպառնալիքների բացահայտմանը: Այնուամենայնիվ, բացառված չէ ռազմավարական ծրագրի որոշ կետերի, ենթակետերի մասնակի փոփոխումը՝ հիմք ընդունելով բուհի ներքին ու արտաքին միջավայրային փոփոխությունները: Այնուհետև նա խոսեց բուհի զարգացման 2015թ.-ի աշխատանքային պլանի մասին՝ ըստ 5-ամյա ռազմավարական ծրագրի: 2015թ.-ի աշխատանքային պլանը

վերաբերում էր ինստիտուտի ելակետային բաղկացուցիչների (կառավարում և վարչարարություն, մասնագիտական կրթական ծրագրեր, ուսանողներ, պրոֆեսորդասախոսական ու ուսումնասօժանդակ կազմ և այլն) կտրվածքով դրված խնդիրների, ենթախնդիրների, դրանց կատարման ժամկետների, ինչպես նաև պատասխանատու սուբյեկտների տարբերակմանը:

Նրա հավաստամամբ՝ ցանկալի կլիներ, եթե բուհում ստեղծվեր համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում, որը կգրադվեր ռազմավարության մշակման, բարելավման աշխատանքներով: Սակայն հաշվի առնելով բուհի սուղ ֆինանսական միջոցները՝ առաջարկեց ստեղծել գիտական խորհրդին կից նոր՝ «Ռազմավարական պլանավորման հիմնահարցերի հանձնաժողով»՝ իր նախագահությամբ, որը կգրադվի բուհի ռազմավարության մշակման, իրականացման ու գնահատման հարցերով: Նաև հայտնեց որակի ապահովման և վերահսկման մշտական հանձնաժողովի կազմից իր դուրս գալու որոշման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.՝ Ռեկտոր Վ. Գրիգորյանը, որակի ապահովման և վերահսկման մշտական հանձնաժողովի նախագահ Ս. Սարգսյանը:

Ռեկտորը հավանություն տվեց գիտական խորհրդին կից նոր հանձնաժողովի ստեղծման գաղափարին, քանզի քաջ գիտակցում է բուհի համար ռազմավարության իրականացման կարևորությունը: Ինչ վերաբերում է որակի ապահովման և վերահսկման մշտական հանձնաժողովից դուրս գալուն, ապա նշեց, որ չի առարկում և խոսքը փոխանցեց Ս. Սարգսյանին:

Ս. Սարգսյանի գնահատմամբ՝ գիտխորհրդին կից ստեղծված որակի ապահովման և վերահսկման մշտական հանձնաժողովն իր պարտականությունները կատարել է պատշաճ մակարդակով: Ինստիտուտի ռազմավարությունը մշակված է: Հանձնաժողովի ստեղծած փաստաթղթերը պետք է անցնեն հետագա փորձաքննություն: Հաշվի առնելով այն իրողությունը, որ բուհի որակի

ապահովման կենտրոնի գործունեությունը համակարգված է, առաջարկեց լուծարել հանձնաժողովը:

Վ. Գրիգորյանը նշեց, որ իսկապես հանձնաժողովը բարձր մակարդակով է իրականացրել իր առաքելությունը և դա պատահական չէ, քանի որ հանձնաժողովում ընդգրկված են եղել փորձառու մասնագետներ: Նա գիտխորհրդի բոլոր անդամների անունից շնորհակալություն հայտնեց հանձնաժողովին՝ կատարած հսկայածավալ աշխատանքի համար և դիմեց գիտական խորհրդի անդամներին՝ քննարկելու Ա. Ֆարմանյանի ու Ս. Սարգսյանի առաջարկությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Տալ հավանություն ԳՊՄԻ-ի զարգացման ռազմավարական ծրագրի /2015-2019թթ./ 2015թ.-ի աշխատանքային պլանին:

2. Լուծարել ԳՊՄԻ-ի գիտական խորհրդին կից որակի ապահովման և վերահսկման մշտական հանձնաժողովը:

3. ԳՊՄԻ-ի ՌԾ-ի (2015-2019) իրականացման արդյունավետությունը ապահովելու նպատակով ստեղծել գիտական խորհրդին կից «Ռազմավարական պլանավորման հիմնահարցերի հանձնաժողով»՝ ներքոհիշյալ կազմով.

1. Անահիտ Ֆարմանյան – Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր (հանձնաժողովի համակարգող)
2. Մամվել Սարգսյան – Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ (հանձնաժողովի նախագահ)
3. Նազելի Ավետիսյան – Որակի ապահովման կենտրոնի տնօրեն
4. Անգին Գրիգորյան – Կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ
5. Վարդուհի Ստեփանյան – Ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ
6. Բենիկ Վարդանյան – Պատմություն մասնագիտության մագիստրատուրա I կուրսի ուսանող

7. Հովհաննես Հակոբյան – Պատմություն մասնագիտության I կուրսի ուսանող
8. Օֆելյա Ավետիսյան – Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության բակալավրիատի III կուրսի ուսանող
9. Արման Ղուկասյան – աշխարհագրություն մասնագիտության մագիստրատուրա I կուրսի ուսանող

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 50 անդամ. կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարցեր:

3.1 ԼՍԵՑԻՆ.- «Ներառական կրթություն» առարկայի ընդգրկմամբ հատուկ մանկավարժի որակավորում շնորհող մագիստրոսական կրթական ծրագրերի ուսումնական պլաններում մասնակի փոփոխություն կատարելու մասին (**Հաղ.**՝ ռեկտոր Վ. Գրիգորյան):

Վ. Գրիգորյանի կարծիքով՝ հնարավոր է՝ մոտ ապագայում ՀՀ-ում գործող բոլոր հանրակրթական դպրոցները դառնան ներառական: Ըստ այդմ՝ ԳՊՄԻ-ին, լինելով մանկավարժական բուհ, պետք է արագ արձագանքի նման փոփոխությանը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ներառական կրթություն իրականացնող մասնագետների պատրաստմամբ: Արդեն այդ ուղղությամբ առաջին քայլերն իրականացվել են, քանի որ բուհի ղեկավարության հանձնարարությամբ մանկավարժության և սոցիալական աշխատանքի ու հոգեբանության ամբիոնների համատեղ գործունեության արդյունքում մշակվել են ելակետային փաստաթղթերը (առարկայական նկարագիր ու թեմատիկ օրացուցային պլան): Հիմք ընդունելով այս հարցի հետ կապված հնարավոր զարգացումները՝ ռեկտորը կատարեց ներքոհիշյալ առաջարկությունները.

1. Մանկավարժի որակավորում շնորհող մագիստրոսական կրթական ծրագրերի ուսումնական պլաններում կատարել մասնակի փոփոխություն մագիստրատուրա II կուրսի II կիսամյակում ներառական կրթություն առարկայի իրականացման համար 5 կրեդիտի /64 լսարանային ժամ. 32 ժամ դասախոսություն, 32 ժամ

գործնական/ տրամադրման վերաբերյալ՝ մագիստրոսական թեզի պատրաստման համար նախատեսված 14 կրեդիտը 9 կրեդիտով փոխարինելու հաշվին:

2.2015-2016 ուստարուց՝ պատրաստել «Հատուկ մանկավարժներ»:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Մանկավարժի որակավորում շնորհող մագիստրոսական կրթական ծրագրերի ուսումնական պլաններում մագիստրատուրա II կուրսի II կիսամյակում ընգրկել «Ներառական կրթություն» առարկան՝ իրականացման համար հատկացնելով 5 ECTS կրեդիտ /64 լսարանային ժամ. 32 ժամ դասախոսություն, 32 ժամ գործնական/:

2.Ուսումնական պլանով «Ներառական կրթություն» առարկայից նախատեսել 1 ընթացիկ ստուգում՝ անհատական աշխատանք, և ամփոփիչ ստուգում՝ բանավոր քննություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 50 անդամ. կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.2 ԼՍԵՑԻՆ.- Տեղեկատվություն դասախոսի տարեկան անհատական աշխատանքային պլանի մասին (**Հաղ.**՝ ռեկտոր Վ. Գրիգորյան):

Հետազոտելով դասախոսների 2013-2014 ուստարվա անհատական աշխատանքային պլանները՝ պարզվել է, որ կան դեպքեր, երբ պլանավորված աշխատանքները կատարվել են թերացումներով: Ըստ այդմ, ռեկտորը հորդորեց ֆակուլտետների ղեկաններին, ամբիոնների վարիչներին լինել առավել զգոն, ուշադիր և հետևողական դասախոսների տարեկան անհատական աշխատանքային պլանների իրականացման գործում՝ ժամանակին հայտնաբերելու և ուղղելու բացթողումները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

3.3 ԼՍԵՑԻՆ.- Տեղեկատվություն ԳՊՄԻ-ի հիմնադրման 80-երորդ հոբելյանի շրջանակներում կազմակերպվող միջոցառումների մասին (**Հաղ.**՝ ռեկտոր Վ. Գրիգորյան):

ա/ Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի և Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի համատեղ ջանքերով ս.թ. հոկտեմբերի 11-ին տեղի կունենա

«ՀԱԶՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ - Ուսանողների մասնակցության մոդելները բուհերի կառավարման համակարգում» միջբուհական-ուսանողական աշխատաժողովը:

բ/ Ս.թ. հոկտեմբերի 24-ին և 25-ին տեղի կունենան Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի կողմից կազմակերպված հանրապետական դպրոցական առարկայական օլիմպիադաները՝ 10-ից 12-րդ դասարանցիների համար:

գ/ Ս.թ. հոկտեմբերի 28-ին և 29-ին Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում տեղի կունենա հանրապետական գիտաժողովը:

դ/ Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի և Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի համագործակցության շնորհիվ՝ ս.թ. նոյեմբերի 14-ին և 15-ին տեղի կունենա «Բուհերի որակի ապահովման գործընթացում ուսանողների մասնակցության մոդելները» թեմայով հանրապետական գիտաժողովը:

ե/Ս.թ. նոյեմբերի 21-ին և 22-ին տեղի կունենա բուհի 80-ամյակին նվիրված պաշտոնական միջոցառումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

3.4 ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 10-րդ դասարանի հոսքերի ձևավորման և առկա ժամաքանակի մասին (Հաղ.՝ ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի տնօրեն Մ. Կարապետյան):

Նա նշեց, որ դեռևս ԳՊՄԻ-ի ավագ դպրոց է դիմել 45 աշակերտ, որոնցից 2-ը՝ 12-րդ դասարան, 6-ը՝ 11-րդ դասարան, 37-ը՝ 10-րդ դասարան: 10-րդ դասարան դիմած 35 աշակերտներից 8-ը դիմել են ընդհանուր հոսք, 27-ը՝ հումանիտար հոսք: Ըստ ՀՀ ԿԳ նախարարի 05.05.2014թ. թիվ 453-Ն հրամանի՝ դասարանների միջին խտությունը ավագ դպրոցի դասարանների համար սահմանված է 20-25 սովորող, ընդ որում, սովորողների թիվն ավագ դպրոցի դասարաններում չի կարող գերազանցել 30-ը: Ուսուցման արդյունավետության

բարձրացման նպատակով Մ. Կարապետյանն առաջարկեց 2014-2015 ուստարում ձևավորել 1 ընդհանուր հոսքի և 2 հումանիտար հոսքի 10-րդ դասարան: Բացի դրանից, Մ. Կարապետյանը նշեց, որ հումանիտար հոսքերից մեկում ֆրանսերեն ուսումնասիրած աշակերտներին կարելի է համախմբել մեկ առանձին խմբում:

2014-2015 ուստարում թվով 3 10-րդ դասարան ձևավորելու դեպքում ավագ դպրոցում կլինի 7 դասարան. 10-րդ դասարան /1 ընդհանուր, 2 հումանիտար/, 1 11-րդ դասարան /հումանիտար/, 3 12-րդ դասարան /2 հումանիտար, 1 բնագիտամաթեմատիկական /ֆիզմաթ և կենսաքիմիա ենթահոսքերով/: Վերոնշյալ 7 դասարանի առկայության դեպքում դպրոցում 2014-2015 ուստարվա I կիսամյակում ժամաքանակը կլինի մոտավորապես 12.3 դրույք /271 ժամ/՝ հետևյալ առարկաների կտրվածքով.

Ռուսաց լեզու- 13 ժամ

Հայոց լեզու և հայ գրականություն – 45.5 ժամ /20.5 ժամ հ.լ., 25 ժամ հայ գրակ./

Անգլերեն – 36 ժամ

Ֆրանսերեն – 12 ժամ

Ինֆորմատիկա – 5 ժամ

Մաթեմատիկա -34 ժամ /21.5 հանրահաշիվ, 12.5 ժամ երկր./

Ֆիզիկա -15 ժամ

Հայոց պատմություն – 33.5 ժամ

Հայ եկեղեցու պատմ. – 4 ժամ

Համաշխարհ. պատմություն – 9 ժամ

Աշխարհագրություն – 8 ժամ

Հասարակագիտություն – 10.5 ժամ

Կենսաբանություն – 15 ժամ

Քիմիա – 12 ժամ

Ֆիզկուլտուրա – 16.5 ժամ

ՆԶՊ – 4 ժամ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Ռեկտոր Վ. Գրիգորյանը:

Ռեկտոր Վ. Գրիգորյանն առաջարկեց 2014-2015 ուստարվանից սկսած՝ ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի դասարանների միջին խտություն սահմանել 12-15 աշակերտ:

ՈՐՈՇԵՑԻՆ. - 1.ԳՊՄԻ-ի ավագ դպրոցում 2014-2015 ուստարում ձևավորել 12-15 սովորողից կազմված դասարաններ:

2.Ձևավորել 1 ընդհանուր հոսքի և 2 հումանիտար հոսքի 10-րդ դասարան:

3.Հումանիտար հոսքի դասարաններից մեկում սովորողները կուսումնասիրեն անգլերեն, իսկ երկրորդում՝ օտար լեզվի ժամերին դասարանը կբաժանվի երկու խմբի. մի խումբը կուսումնասիրի ֆրանսերեն, իսկ մյուսը՝ անգլերեն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 50 անդամ. կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.5 ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 2013-2014 ուստարվա հաշվետվություն և 2013-2014 ուստարվա ներքին գնահատման հաշվետվություն (Հաղ.՝ ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի տնօրեն Մ. Կարապետյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 2013-2014 ուստարվա հաշվետվությունը և 2013-2014 ուստարվա ներքին գնահատման հաշվետվությունը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 50 անդամ. կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝

Վ. Գրիգորյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Թ. Խաչատրյան